## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2025 թվականի հունվարի 16-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/134-9 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի հուլիսի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** Պատասխանատու ստորաբաժանման համապատասխան զեկուցագրի հիման վրա՝ գնման առարկա հանդիսացող ապրանքի լրացուցիչ քանակության ձեռքբերման անհրաժեշտություն:

**Փոփոխության նկարագրություն.** Կատարված փոփոխությունների արդյունքում.

1. Պայմանագրի 3.1 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ. «3.1 Պայմանագրի գինը կազմում է 5,794,552.74 (հինգ միլիոն յոթ հարյուր իննսունչորս հազար հինգ հարյուր հիսուներկու դրամ յոթանասունչորս լումա)_ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

2. Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

3. Պայմանագրի Հավելված N 2-ով սահմանված «ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը՝ 66-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 1-ի:

4. Պայմանագրի Հավելված N 3-ով և Պայմանագրի շրջանակում 2026 թվականի փետրվարի 09-ին կնքված N 1 Համաձայնագրի Հավելված N 1-ով սահմանված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*»-ը՝ 66-րդ չափաբաժնի մասով փոփոխվել և հաստատվել է նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի Հավելված N 2-ի:

**Փոփոխության հիմնավորում.** Պայմանագրի 8.5 կետի համաձայն:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**